



**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 8 « 24 » 05 2017 թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Մ.Մինայանի «Համալսարանական հիվանդանոցների 2016թ. գործունեության հաշվետվությունը» թեմայով զեկուցումը,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համալսարանի կլինիկական աշխատանքները գնահատել բավարար:
2. 2017-2020թթ ընթացքում ավարտել «Մուրացան» և «Հերացի» համալսարանական հիվանդանոցներում առկա շուրջ 2500մ² անբարեկարգ տարածքների վերանորոգման աշխատանքները:
3. 2017-2018թթ ընթացքում ձեռք բերել նոր սարքավորումներ համալսարանական հիվանդանոցների ուրոլոգիական, ընդհանուր և ինվազիվ սրտաբանության, մանկական և ընդհանուր վիրաբուժության, ակնաբուժության և նորածնային վերակենդանացման կլինիկաների համար:
4. Մինչև 2019 թվականը ավարտել համալսարանական հիվանդանոցներում գործողությունների ստանդարտ ընթացակարգերի ներդրման գործընթացը:
5. 2017թ-ի ընթացքում ավարտել թիվ 1 համալսարանական հիվանդանոցում զինվորական հաշմանդամների վերականգնողական կենտրոնի ստեղծման գործընթացը:
6. Հանձնարարել կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Մ.Մինայանին՝ յուրաքանչյուր եռամսյակ վերոնշյալ 2,3,4,5 կետերի վերաբերյալ կատարվող աշխատանքների մասին զեկուցել ԵՊԲՀ ռեկտոր Ա.Ա.Մուրադյանին:
7. Մինչև 2018 թվականի ավարտը ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ռ.Ավետիսյանի և հետբուժական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ա.Ավետիսյանի հետ համատեղ մշակել ծրագիր, որը կնպաստի ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, կլինիկական գործընթացներին առավել լայնորեն ներգրավմանը, ինչպես նաև կլինիկական առարկաների դասավանդման որակի բարձրացմանը:
8. Մինչև 2018 թվականի ավարտը գիտության գծով պրոռեկտոր Կ.Բ.Ենկոյանի հետ համատեղ կազմակերպել կլինիկական ուղղվածության գիտական միջոցառումներ, ինչպես նաև մշակել կլինիկաների լաբորատոր և գործիքային հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու ծրագրեր՝ որպես գիտական հետազոտությունների իրականացման բազա, որը մեծապես կնպաստի կլինիկական գիտության զարգացմանը:
9. Մինչև 2018 թվականի ավարտը միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ե.Ս.Սահակյանի հետ համատեղ նախաձեռնել միջազգայնացմանն ուղղված համագործակցության ծրագրեր արտասահմանյան առաջատար բժշկական ուսումնական հաստատությունների և կլինիկաների հետ՝ նպաստելով համալսարանական հիվանդանոցների աշխատակիցների մասնագիտական կատարելագործմանը:
10. Համալսարանական կլինիկաների վճարովի ծառայությունների 2 տոկոսն ուղղել վարչական անձնակազմի հավելավճարներին:
11. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Տ.Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆ